

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

13.10.2017

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/:
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին հաշվետվություն /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/:
3. ՀՀ բուհերի լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին (Հանրապետության լավագույն ուսանող) ֆակուլտետի ուսանողների առաջադրման մասին /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Ա. Ներսիսյանը ներկայացրեց 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցի համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողների գերակշիռ մասը դրական գնահատական են ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Ձեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

Պատմություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 6 ուսանող, որոնցից 5-ը 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ, իսկ 1 ուսանող՝ Դմիտրի Ղալումյանը, հեռացվել է մասնաճյուղից երկու առարկաներից անբավարար գնահատականներ ստանալու պատճառով:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 4 ուսանող, որոնցից 3-ը 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ, իսկ 1-ը՝ 2-րդ լուծարքային շրջանում:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 7 ուսանող, որոնք 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ:

Հոգեբանություն, Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտություններով բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 9 ուսանող, որոնցից 6-ը դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում, 2-ը՝ երկրորդ, իսկ 1-ը՝ երրորդ:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 3 ուսանող, որոնցից 2-ը դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում, 1-ը՝ երկրորդ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Զ.. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Ա. Ներսիսյանը ներկայացրեց 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Չեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը: Բացի այդ՝ ամբիոնները նախատեսում են բոլոր ընթացիկ քննությունները և ստուգումները անցկացնել հանձնաժողովներով: Չեկուցողը նշեց, որ ամբիոնների կողմից քննարկման է ներկայացվել հանձնաժողովների կազմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Զ.. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ՝

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ զեկուցեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Ներսիսյանը: Նա հայտնեց, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և Հայաստանի երիտասարդական հիմնադրամը հայտարարել են մրցույթ, որին մասնակցելու համար ֆակուլտետի ղեկավարությանն են դիմել «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհիներ Սյուզաննա Արտաշեսի Շահնագարյանը, Արինա Արմենի Պարոնյանը, «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ Մարատի Զուրաբյանը:

Նշված ուսանողները համապատասխանում են մրցույթի չափանիշներին, ունեն բարձր առաջադիմություն, գիտական և հասարարական ակտիվություն, ուստի ֆակուլտետը քննարկման է դրել երաշխավորել նրանց մասնակցությունը նշված մրցույթին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Բ.գ.թ., դոցենտ, Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Մ. Զուրաբյանը:

Արտահայտվողները նշեցին, որ նշված ուսանողները համապատասխանում են առաջադրված պահանջներին: Նրանք ուսումնառության տարիներին աչքի են ընկել գերազանց առաջադիմությամբ, դրսևորել են պատշաճ վարք, ցուցաբերել են հասարակական ակտիվություն: Նրանք ընդգրկված են եղել ուսանողական կառույցների աշխատանքներին: Բացի այդ՝ մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովների և սեմինարների:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Առաջադրել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհիներ Սյուզաննա Շահնագարյանի, Արինա Պարոնյանի և «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ Զուրաբյանի թեկնածությունը ՀՀ բուհերի լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Ներսիսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Աղաբաբյան